

«Հայնարմարգրանիտ» ա/մ` այժմ «Ալմաքար» ՍՊԸ-ն, ստեղծվել է 1971 թվականին՝ Նուռնուսի քարերի մշակման բազայի հիման վրա: Տնօրեն Թելման Օհանյան: Գործարանը զբաղվել և զբաղվում է երեսպատման սալիկների արտադրությամբ: 1984 թվականին Շորժայի փորձամշակման, Երևանի քարմշակման գործարանները և Ստեփանավանի հանքավարչությունները միավորվել են Նուռնուսի քարամշակման գործարանին և 1986 թվականի փետրվարին վերանվանվել է «Հայնարմարգրանիտ» ՎԱՍ (վարձակալական ա/մ):

1993 թվականի ապրիլից ՎԱՍ-ը վերանվանվել է «Հայնարմարգրանիտ» ՍՊԸ: 2000 թվականի սեպտեմբերից այն կոչվում է «Ալմաքար», իր գործունեության ընթացքում ՍՊԸ-ն կատարել է մի շարք պատասխանատու պետական պատվերներ՝ «Զվարթնոց» և «Էրեբունի» օդանավակայաններ, Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր, «Ռոսիա» կինոթատրոն, Երևանի մետրոպոլիտեն, Ալ. Սպենդարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն:

Բացի տեղական կառույցների պատվերներից, գործարանը կատարել է նաև արտասահմանյան մի շարք երկրների պատվերներ: Երեսպատման սալիկներով ապահովվել է Շվեդարիային՝ հայկական կենտրոնը, Մոսկվային Կրեմլի համագումարների պալատը: Կառուցվել է Ֆրանսիայի դեսպանատունը, Միդլենդ-Արմենիա բանկը, կատարել է Հայաստան հիմնադրամի պատվերները: Գործարանը բազմիցս ճանաչվել է սոցիալիստական մրցուցիան հաղթող, պարգևատրվել է մի շարք պատվոգրերով: Նա այսօր էլ պատրաստ է կատարել Հայաստանի Հանրապետության շինարարական օբյեկտների բոլոր պետական պատվերները:

Գործարանը հանքավայրեր ունի Իջրանում, Ստեփանավանում, Աղավնաձորում, Սուլիձորում (Հրազդան), Նուռնուսում:

«Ալմաքար» ՍՊԸ-ում արտադրվում են երեսպատման սալիկներ՝ բնական քարերից՝ մարմարից, բազալտից, տուֆից, տրավերտինից: Գործարանում ծաղկման շրջանում աշխատել են 600 մարդ, ունի պանսիոնատ՝ Ծաղկաձորում, բանվորական կացարան Շորժայում, կառուցել է երկու բնակելի շենք, մեկ մանկապարտեզ Բյուրեղավանում:

1998 թվականին աշխատողների թիվը կազմել է 171 մարդ, 2004 թվականին բոլոր տեղամասերում աշխատողներ թիվը հասնում է 115-ի:

1971 թվականի հոկտեմբերից մինչև 1974 թվականի հուլիս՝ տնօրեն է եղել Լավրենտի Սարգսյանը:

1974 թվականի հուլիսից մինչև 1974 թվականի նոյեմբեր՝ Էդուարդ Սարգսյանը (ժամանակավոր պաշտոնակատար):

1974 թվականի նոյեմբերից մինչև 1975 թվականի դեկտեմբեր՝ Ալֆրեդ Բելուբեկյանը:

1975 թվականի դեկտեմբերի 22-ից տնօրեն, 1985 թվականից՝ գլխավոր տնօրեն՝ Լևոն Մամիկոնի Մակարյանը:

1989 թվականի ապրիլից մինչև 1991 թվականի հունվար՝ Արշալույս Սիմոնի Տիգրանյանը:

1991 թվականի հունվարից մինչև 2000 թվականը՝ Լևոն Մամիկոնի Մակարյանը:

2000 թվականի փետրվարից «Ալմաքար» ՍՊԸ-ի տնօրեն է Արամ Լևոնի Մակարյանը:

2010 թվականի դրությամբ «Ալմաքար» ՍՊԸ-ն ունի 63 աշխատող:

